

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՒՐ

Հոկտ. 13ի համազգային Մեծ Տօ՛ւր, որ կ'ոգեւորէ բոլոր Հայ սիրտերը, apotheosէն երկու մեծանուն եկեղեցականներու, որոնք 1,500 առիւթով կազմուելով Հայկեցի գիրը, հիմնաւորեցին Հայ Գրականութիւնը: Սահակ և Մեսրոպ միայն պարզ հանձարներ չեղան, որոնք շքեղ բոցավառու մով մը լուսաւորեցին իրենց ապրած միջավայրը և պատմութեան եռուզեռ հոսանքին մէջ անհետացան, այլ իսկական բարերարներն են ամբողջ ժողովուրդի մը, որուն ազգային գիտակցութիւնն ու ոգին իրենց ջանքերով կազմաւորուեցաւ:

Հայ մտքի և Հայ նկարագրի ինքնակացութիւնը Հացեկացացի վարդապետին հնարած տառերուն պարգեւն է: Բաղաքական ճորտութիւնը և գիւտարական գերակառութիւնը վաղանցիկ են ազգի մը կեանքին մէջ, միայն քաղաքակրթութեան մը հոգեկան տարրն է մեայուն և կենսալից: Այն աննպաստ պայմաններուն մէջ, ուր կ'ոգնուէր Հայ ժողովուրդը Ս. Էջարուն, և այն դժգոհի ու մռայլ իրադարձութիւններուն մէջ, որ մեր պատմութեան արիւնոտ շղթան կ'ողակաւորեն, Սահակ-Մեսրոպեան գիւտը, կամ ծաղկեցուցած գրականութիւնը Հայ ցեղին գոյութեան իսկական կենսահիթը և զօրութիւնը կազմեց:

Հայոց երկիրը իր Միջն-շիրահի դիրքով ճակատագրականօրէն կազմակերպուած հալածանքներու և մշտական արշաւանքներու թափ հանդիսացաւ: Բայց միշտ Հայ կեանքը Փիւնիկի պէս վերածաղկած է Ս. Մեսրոպի մոգական տառերուն զօրութեամբ:

Մենք տարբանակ Հայերս շատ քիչ կ'աննչանք մեր հայրենի երկիրն իր ինքնայատուկ գեղեցկութիւններով և սրբութիւններով: Հարկ է այցելել այն պատմական վայրերն, ուր երբեմն Հայ քաղաքակրթութիւն մը ծաղկեցաւ, որուն անսպառ զանձատուններն են Հայ վանքերն իրենց թանկարժէք և գեղարուեստական դրազներով, և կիսակործան աւերակներն իրենց ներդաշնակ ու նուրբ ճարտարապետութիւնով: Հայը դրօշակիրն եղած է արեւմտեան քաղաքակրթութեան շահողման Ասիոյ մէջ և անոր պաշտպանը վարագ ցեղերու ամենակուլ արշաւանքներուն դէմ:

Պէտք է սրտի և մտքի նոր կեանք մը ապրիլ հոն, ուր կ'աննչին Սահակ և Մեսրոպ, Սգնիկ և Նարեկացին: Պէտք է հոգիի անձառ յուզումով մը ողջունել վսեմական Մասիս, զիւցազներու երկնաբերձ լեռը, որ մեր ցեղին դարաւոր գոյութեան ու տոկունութեան պատկերն է, որուն վէս և ձիւնափառ գագաթէն կ'սուրան կ'անցնին սև ամպեր և շանթարձակ փոթորիկներ, առանց սարսելու զայն իր հիմերուն մէջ: Պէտք է սրտի արցունքով օժել ցանկալի Անիի շքեղ աւերակները, այդ պերճախօս վկանները Հայ ստեղծագործող ազգայնէրին և բարձրակրթ մտքին: Եւրոպական քաղաքակրթութիւնն իր ճարտարարուեստով, գեղարուեստով համագրամ և ընկուզած է մեր ցեղային ինքնութիւնը. կարծես թէ խամրած է մեր ստեղծելու ընդունակութիւնը և մեր առանձնայատուկ կարողութիւնները, ինչ որ նշանակելի չափով ունէին մեր նախնիք, օգտուելով հանդերձ արեւմտեան և արեւելեան քաղաքակրթութիւնէն ու յառաջդիմութիւնէն:

Մեր գրականութեան 15 դարեան յորելեանն աճնէն աւելի ազգային ինքնագիտակցութեան թուական մը պէտք է որ բանայ, ուր մեր ցեղը կարենայ վերածնիլ ինքնայատուկ պարզացումով մը, վերստանայ իր ստեղծելու ընդունակութիւնը, և ազգային հոգին վրայ ճշմարիտ և գիտական կրթութեամբ մը ուժաւորած կարենայ կատարել իր պատմական պանծալի դերը:

Ուրեմն, հայ գրականութեան և սոցալգրութեան կրկնակ յորելեանները, խորհրդաւոր կերպով զուգախառնուած, հայ հանձարը կ'փառաւորեն, որուն վճիռ աղբերակն է Ոսկեդարը, գրական երկնահանգոյն բարձրութիւն մը, որ եզական է մեր պատմութեան մէջ, և որ հեզիկ ու յորջ ծաւալումներով, ժամանակի բնութեան մէջ, կ'ոգնուէ և կ'աննչազարդէ հայ մտքի դարաւոր բուրաստանը, իր երկնազեղ ծաղիկներով և անուշաբեր միջոլորտով:

Հայ եկեղեցւոյ հոգեւունչ քնարն ալ, Հոկտ. 12ին, իր ամենէն փափուկ և սրբազարու թիւրքով կ'թրթռացնէ յիշատակը մեր երանաշնորհ թարգմանիչ վարդապետներուն, որ բարձրագոյն կանառը կը կազմեն հայ դասական մտաւորականները, ամենագան շնորհներով օժուել: Ս. Մեսրոպն է այն, որ առաջեկալան ոգին և ստեղծագործող ոյժը կ'մարմնացնէ, Բաղդախոսն Սղիշէ, գաղափարապաշտ մատենագիր, որուն ոսկի գրքոյկը բարձր հայրենասիրութեան դիւցազնագրութիւնն

է, Մովսէս՝ հայրենասէր պատմագիր, ուր անցելով կ'վերակենդանանայ իր պատմական փառքերով, Գաւթի՝ նրբամիտ իմաստասէր, աղբիւհեան մեղրով սնած, Նարեկացին՝ բարձրակրթ բանաստեղծ, կրօնաշունչ վսեմ ողբերգակ, որ իր աթոռն ունի տիեզերական մեծ մտքերու ակունքին մէջ. իսկ կ'այցեցին՝ համակ շնորհ և քնար, ուր սրտի և մտքի սրբազան ձիրքերը ներդաշնակ և գեղարարմար համադրութեամբ մը ի յայտ կուգան: Այս մեծ և պատկառելի դէմքերը յաւելու կ'ըլլեն և կ'արձարացնեն մեր սիրտերը, ազնիւ ու կազդուրիչ ներշնչումներ առնով մեզի:

Արմաշ. ՄեծՈՐՊ եՅՍ. ՆԱՐԵԿԱՆ

## ԲՐՈՅ. ՅՈՎ. ԶԱԿՈՒԵԱՆ ԷՅ.Ի ԱՄՈՒՐ ՌՈՊԵՐԴ ԲՕԼԷՃԻ ՄԷՋ

Հայ գրերու գիւտի և Հայ սոցալգրութեան յորելեանի տօնը ո՛չ միայն Հայ գրականութեան, Հայ մտաւորականութեան, այլ նաև գիւտարար Հայ փառքի ու ազգային գոյութեան նուիրագործութիւն փառաւորումն է:

Ազգերու պատմութեան մէջ իւրաքանչիւր ցեղ մարդկային քաղաքակրթութեան իր սեփական մէկ կոթողը կանգնած է, իր առանձնայատուկ նկարագրով ու արտադրութեամբ նուիրագործելով իր գոյութեան իրաւունքը: Մեռած աննետացած են այն ամենազգրը, որոնք ցեղային կենսունակ առանձնայատուկութիւն մը ցուցաբերած չեն: Արեւելք ու Արեւմտոս նկայ նիւթական քաղաքակրթութիւն մը ստեղծեցին, Յունաստան գեղարուեստ ու փիլիսոփայութիւն և Հռոմ օրէնք ու կազմակերպութիւն տուին: Իսկ Հայ ցեղը իր դարաւոր պատմութեամբ, սոցալոյցը տուած է թէ ան եղած է հաւատքի ու իտելիի ազդը:

Հայ գրերու գիւտը Հայուն հաւատքին ու իտելիականութեան ամենամեծ արտադրութիւնն է, և միւսնոյն ատեն ամենազօրաւոր մէկ սոցալոյցը ազգային այդ նկայ նկարագրին գոյութեան:

Անգամ մը ձեր մտքին առկա բերէք անցելով, Չորրորդ դարը, Հինգերորդ դարը, երբ Հայութիւնը Նոր կրօնքի մը շուրջ կ'որոտուէր: Բրիտանուութիւնը շուտով կ'տարածուէր Հայերուն մէջ, որովհետև ան հաւատքի ու իտելիականութեան կրօնն էր: Մանաւանդ սկզբնական դարերուն Բրիտանուութիւնը կ'մերժէր այն ինչ որ նիւթական էր, այն ինչ որ այն ժամանակի ըմբռնումով աշխարհային էր, և մարդկային երջանկութիւնը առաքինի կեանքի մը և ապաքայ յուրանական վայելքի մը մէջ կ'փնտուէր: Այս իսկ վր պատճառը որ այնքան արագ օրէն նոր կրօնք մուտք գործեց Հայաստանի ամեն անկիւններուն մէջ և ժողովրդականացաւ ու պետական դարձաւ:

Հայն իր հեթանոսական կրօնին մէջ անգամ մերժած էր նիւթականութիւնը, մերժած էր առարկան, իրը, ու փոխարէն լայն տեղ տուած էր իտելիական ու վերացական ըմբռնումներու: Բրիտանուութիւնը իր նկարագրին կ'արմարէր ու կըրնար նոյնանալ իր ցեղային առանձնայատուկ ըմբռնումներուն հետ:

Նոր կրօնի տարածումին առաջին պաշտօնեաները սակայն օտարականներ էին, որոնք զգացումով չէին կրնար նոյնանալ ազգին հետ: Անոնք չէին կրնար ըմբռնել այն զօրաւոր հաւատքը, զոր Հայ ցեղն ունէր իր գոյութեան վրայ չէին հասկնար ըմբռնումը՝ որով Հայը կ'աճուէր կրօնն ազգայնականութեան մէջ: Անոնք կ'քարոզէին ու կ'ուսուցանէին լեզու մը, զոր Հայը չէր հասկնար և չէր կրնար անով գոհացում առ իր հոգեկան ըմբռնումներուն: Պահանջը, լեզուի հակացողութեան պահանջը, կ'զարգանար, կ'զօրանար Հայութեան մէջ և կ'ուզէր վսեմ, անհետացնել այն ահաւոր վտանգն որ կը սպառնար իր գոյութեան յօտար լեզուներու, այսինքն յունարէնի ու ասորերէնի տարածումովը: Նոր երեւոյթ, նոր շարժում մը երեւան կուգար որ ինքնատուրէն հայկական էր:

Ընկերային երեւոյթները անհասանք չեն որ կ'ստեղծեն ազգերուն մէջ, այլ կեանքն ու ժամանակի պահանջներն են որ կ'ծնին, առաջ կ'բերեն անհասանքը, որոնք զլուխ կ'կանգնին երեւոյթներու ու շարժումներու: Այդպիսի անհասանք կրնան երեւան գալ գիւղական իրճիթներէն կամ արքայական պալատներէն, բայց շարժումը կ'ծնի ամբողջ ժողովուրդի մը սրտին և հոգեւոյն մէջ: Այդպէս ալ եղաւ Եւրոպ. Դարուն Հայաստանի մէջ: Տարօնի Հացեկաց գիւղէն կ'բարձրանար Մեսրոպ Մաշտոցը, անոր ձեռք կուտար Հայրապետական գաւառն վրայ բազմած Սահակ Պարթև և ու իտելիական նկայ յղացում մը կ'արդիւնաբերէր, վտանգապաշտութեան պաշտպանութեամբն ու հովանաւորութեամբը: Այս նկայ արդիւնքը Հայ գրերու գիւտն էր, այն գործիքը, այն զէնքը, զոր Հայ ցեղը պիտի կարե-